



ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐ

ՇՕՇԱՓԵԼԻՔ

Մեր մորթը ունի շօշափելիք միլիոնաւոր ընկալիչներ, որոնք կը հակազդեն հինգ տեսակ ազդեցութիւններու՝ ճնշումի, հպումի, տաքի, պաղի եւ ցաւի: Անոնք այս տեղեկութիւնները ուղեղին կը փոխանցեն ջիղերուն միջոցաւ:

ՓՇԱՔԱՂՈՒԹԻՒՆ

Երբ կը մսիս, մազը բարձրացնող մկանները, որոնք կը գտնուին իւրաքանչիւր մազիկի արմատին մօտ, կը կծկուին եւ մազիկները կը ցցուին: Այս է, որ փշաքաղութիւն կը յառաջացնէ: Վախի ընթացքին ալ կրնայ փշաքաղութիւն յառաջանալ:

ԳԻՏԵ՞Ս, ԹԷ...

Մեր մորթը ծածկող բարակ մազիկներուն շնորհիւ, կը զգանք օդին ամենամեղմ շարժումը:

ՀՈՏՈՏԵԼԻՔ

Քիթը ունի հոտը ընկալող բազմաթիւ բջիջներ: Այս բջիջները կը գտնուին քթային լորձնաթաղանթին տակ: Հոտաւետ իրերը կ'արտադրեն քիմիական կազեր, որոնք կը տարածուին օդին մէջ: Հոտառական ընկալիչները զգայուն կ'ըլլան այդ քիմիական կազերուն նկատմամբ: Երբ զանոնք կը յայտնաբերեն, ուղեղին տեղեկութիւններ կը դրկեն այդ զանազան հոտերուն մասին, որոնցմէ մաս մը հաճելի կը թուի, ուրիշներ՝ նուազ հաճելի: Մեր քիթին հոտառական բջիջները կրնան զանազանել շուրջ 3000 տարբեր հոտեր:

ՀԱՄ

Մեր լեզուն ծածկուած է մանր ցցուածքներով՝ քմային (քիմքին յատուկ) պտկիկներով (փոքր փշտիկներ), որոնք մեզ կը փոխանցեն կերակուրներուն եւ խմիչքներուն համերը:

Կան չորս տեսակի պտկիկներ, որոնցմէ իւրաքանչիւրը յատկացուած է լեղի, քաղցր, աղի եւ թթու համերուն:


ԳԻՏԵ՞Ս, ԹԷ...

Լեզուն ճաշակելու ընդունիչները կ'աշխատին հոտառական ընկալիչներուն հետ գործակցաբար: Այնպէս որ երբ հարբուխ ըլլանք, ուտելիքներուն եւ ըմպելիքներուն համերը նուազ կը զգանք, որովհետեւ հոտառութեան կորուստը կ'առաջնորդէ համերուն ընկալման նուազումին:




ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՆՆԵՐ՝ ՄԱՐՏԻՆԻ ԱՇԽԱՆՆԵՐ, ՇԱՀՐԱՆԻՆԻ, ՆԿԱՐԱՍԱՐՈՒՆԵՐ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՐՈՇԵՆՆԵՐ

ՁԱԳՈՒԿՆԵՐԱ ԿԸ ԳԾԵՆ



Նշանակուած թիւերուն համաձայն, գունաւորէ՛ հետեւեալ պատկերը:



ՀԱՆԵԼՈՒԿ
 Ընտանիք մը կը բաղկանայ վեց աղջիկներէ, որոնցմէ իւրաքանչիւրը ունի մէկ եղբայր: Քանի՞ անդամ կը բաղկանայ այս ընտանիքը:
 շ :ղտոլոտոտոտ

ԾՈՅԼ ՏՂԱՆ

Թորոսին որդին ծոյլ տղայ մըն էր, ո՛չ գրել կը սորվեր, ո՛չ ալ արհեստ:

- Ի՞նչ արհեստ սորվիմ,- կը փնթփնթար ան,- անճարակութիւնը շատ լաւ արհեստ է, բայց բոպիկ ոտքերով փողոցները պտտիլը այդքան ալ հեշտ չէ: Աւելի հեշտ է սուլիչ փչելը, բայց այդ ալ իմ ձեռքերուս մէջ երկար չեն ձգեր: Վարպետ ալ դառնամ, ի՞նչ պիտի ընեմ. պէտք է փոքր մատներովս տաք-տաք բամպակով պղինձին իւղ քսեմ, ձեռքերս այրե՞մ: Ո՛չ, այդ չէ իմ գործս:

- Եթէ երկաթագործի քով երթամ, այնտեղ ալ քամի կայ, ձմեռն ալ տաք է. բայց մեծ ուժ պէտք է այդ գործին համար: Ահագին մուրճով երկաթը ծեծել, մինչեւ տափակ դառնայ, ես այդ գործը չեմ ըներ, ինչ կ'ուզէ ըլլայ:

- Ձիապանը լաւ է, եղունգի ծայր սրել եւ պայտեր շտկել... այդ մէկը շատ դժուար չէ. բայց փորձանք է... ձիուն ոտքը բռնելն ու ծունկը գետին դնելը, սոսկալի է. ձիուն աքացին իմ ընկերներուս ապտակներէն աւելի թունդ է: Ո՛չ, իմ կարծիքովս այդ իմ գործս չէ:

- Դերձակութիւնը մաքուր արհեստ է, լաւ որ միտքս ինկաւ: Բայց ի՞նչ կ'ըսեմ ես... օրերով ծալապատիկ նստիլն ու կարե՛լ-կարե՛լ... ո՛չ խաղալ կ'ըլլայ, ո՛չ ալ վազվզել: Չէ՛, այդ ալ իմ գործս չէ:

- Ինչո՞ւ որմնադիր չդառնամ եւ բարձր պատերուն ծայրերը կանգնելով, այնտեղէն չկանչեմ,- «Քար ու կի՛ր տուէ՛ք, ցե՛խ դրկեցէ՛ք, աղի՛ւս ձգեցէ՛ք»: Այսպէս կը գոռամ եւ կը հրամայեմ, որ աշխարհը տեսնէ, թէ ես վարպետ եմ եւ գործս լաւ գիտեմ: Բայց վա՛յ թէ յանկարծ այդ բարձր տեղէն ոտքս սահի եւ սարսռալով վար գլորուիմ, հոգիս աւանդե՞մ: Չէ՛, այդ դիրին գործ չէ եւ իմ բանս չէ:

- Երեւի չկայ այնպիսի արհեստ մը, որ ես կը հաւնիմ: Եթէ կօշկակար դառնամ՝ ձեռքս կը ծակեմ, ոսկերիչ դառնամ՝ մատներս կ'այրեմ, կաւագործ դառնամ՝ ցեխերու մէջ պիտի կոխեմ, վարժարան երթամ՝ գիր պիտի սորվիմ: Չէ՛, իմ կարծիքովս ամենէն լաւն է, ամենէն դիրինը ոչինչ շինել, ոչինչ սորվիլ:



ՄԵՆՔ ԲՈՒՆՈՐՍ ԱՅՆՔԱՆ ՏԱՐԲԵՐ ԵՆՔ...

Այս աշխարհի երեսին շատ եւ տեսակաւոր մարդիկ կ'ապրին, որոնք իրարմէ կը զանազանուին իրենց մաշկերուն գոյներով, աչքի ձեւերով եւ ուրիշ արտաքին յատկանիշներով:

Մեր մոլորակին բոլոր բնակիչները կը բաժնուին երեք հիմնական խումբերու: Ճերմակակերպ, սեւակերպ եւ մոնկոլակերպ: Բաց գոյնի աչքերով, մաշկով եւ մազերով մարդիկ կը պատկանին ճերմակակերպ խումբին (այդպիսիներն են օրինակ՝ ռուսերը, անգլիացիները եւ ֆրանսացիները):

Ափրիկէի մէջ ապրող մարդիկ մուգ գոյն մաշկ, հաստ շրթունքներ, լայն քիթ եւ գանգուր մազեր ունեցող տեսակն են: Անոնք կը պատկանին սեւակերպ խումբին:

Իսկ մոնկոլակերպ խումբը կը ներկայացնեն կլոր կամ հաւկթաձեւ դէմք ունեցող մարդիկ, որոնց աչքերը կ'ըլլան նեղ, մազերը մուգ գոյնի, իսկ մորթը՝ թուխ (այդպիսիներն են օրինակ՝ ճափոնցիները, չինացիները եւ ամերիկեան հնդիկները):

